ԼԵՖԵՍՏԻ

VIDEO PROGRAM

ՎԻԴԵՈ ԾՐԱԳԻՐ

CURATOR
Victoria Ilyushkina

ՀԱՄԱԴՐՈՂ՝
Վիկտորիա Իլյուշկինա

5.09.2023, 19:00
7.09.2023, 19:00

VENUE
Institute for Contemporary Art
(ICA Yerevan)
47 Avet Avetisyan St

ՎԱՅՐԸ
Ժամանակակից արվեստի
ինստիտուտ (ԺԱԻ Երևան)
Ավետ Ավետիսյան 47

PARTICIPANTS
Anna Ivonina
Nadezhda Bey
Marisa Benito
Maria Kuptsova
Selena Isho
Anastasiia Lonshakova
Mariam Arami (Papoyan)
Eléonore de Montesquiou
Gor Margaryan
Total runtime: 84 min.

Special screening
Pim Zwier (80 min.)

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝
Աննա Իվոնինա
Նադեժդա Բեյ
Մարիսա Բենիտո
Մարիա Կուպցովա
Սելենա Իշո
Անաստասիա Լոնշակովա
Մարիամ Արամի (Պապոյան)
Էլեոնորա դե Մոնտեսկիու
Գոռ Մարգարյան
Ընդհանուր ժամանակը՝ 84 ր.

Հատուկ ցուցադրություն
Պիմ Ցվիեր (80 ր.)

REGENERATION
New structures are appearing, adapting to the current world's dynamic nature and resisting violence. They are launched by the disruption of traditional systems from sociopolitical cataclysms, eradications of the displacement of trauma, and losses.

In the works selected for this program, the artists reexamine notions common to us: language, motherland, home, nature, matter. They do it by deconstructing and rebuilding their personal stories and documentary evidence through the use of performative practice, verbal and nonverbal communication, digitizing and 3D modeling of their surroundings or by algorithms of computer-assisted instruction and artificial intelligence.

– Victoria Ilyushkina

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ
Սոցիալ-քաղաքական կատակլիզմերի հետևանքով սովորական համակարգերի քայքայումը, տեղահանման տրավմայի ամոքումը և կորուստները ստիպում են հարմարվել աշխարհի փոփոխականությանը և բռնությանը դիմակայելու նոր համակարգեր ձևավորել:

Այս ծրագրի համար ընտրված աշխատանքներում արվեստագետները վերաիմաստավորում են առօրյա կյանքին առնչվող այնպիսի ծանոթ հասկացություններ, ինչպիսիք են լեզուն, հայրենիքը, տունը, բնությունը, նյութը: Նրանք դա անում են՝ ապակառուցելով և վերահավաքելով անձնական պատմություններ, վավերագրական ապացույցներ, կատարողական պրակտիկայի, բանավոր և ոչ բանավոր հաղորդակցության, թվայնացման և շրջակա միջավայրի 3D մոդելավորման միջոցով՝ օգտագործելով մեքենայական ուսուցման ալգորիթմեր և արհեստական բանականություն:

– Վիկտորիա Իլյուշկինա

Anna Ivonina
Carry on
11 min. 6 sec., 2022

The film was created as part of the "Ether" project by the School of Young Artists, the PRO ARTE Foundation, in 2022. The film tells the stories of girls who left their homes in 2022 and invites viewers to explore what is kept in their luggage. "Carry On" provokes an examination into the concept of home. Is one's home based on belongings, people, networks? Is it the specific place where you were born, raised, lived, or the place where you are now? After leaving Russia in 2022, the artist focused on exploring the theme of home.

Anna Ivonina
Anna Ivonina developed an interest in space and environment through her work as a production designer in the film industry. When she became involved in contemporary art, she explored the theme of seeking new ways of coexistence and connection with the world in her projects. She examined the relationships between nature and humans, the living and the synthetic, the natural and the artificial, working with media such as installations and art objects. Studying at the PRO ARTE Foundation expanded her practice into photography and videography. After leaving Russia in 2022, the artist focused on research on the theme of home.

Աննա Իվոնինա
Շարունակել
11 ր., 6 վրկ., 2022

Ֆիլմը ստեղծվել է 2022 թվականին «Եթեր» նախագծի շրջանակներում Երիտասարդ արվեստագետների դպրոցի՝ PRO ARTE հիմնադրամի կողմից: Այն պատմում է աղջիկների մասին, ովքեր լքել են իրենց տները 2022 թվականին, և հրավիրում է դիտողներին ուսումնասիրել, թե ինչ է պահվում նրանց ուղեբեռների մեջ: «Շարունակել»-ը զննում է «տուն» հասկացությունը: Արդյո՞ք տունը հիմնված է իրերի, մարդկանց, ցանցերի վրա: Արդյո՞ք դա այն կոնկրետ վայրն է, որտեղ դուք ծնվել, մեծացել, ապրել եք, թե՞ այն վայրն է, որտեղ այժմ գտնվում եք: 2022 թվականին Ռուսաստանից հեռանալուց հետո արվեստագետը կենտրոնացել է տան թեման ուսումնասիրելու վրա:

Աննա Իվոնինա
Աննա Իվոնինան կինոարդյունաբերության մեջ որպես բեմադրող նկարիչ աշխատելու ընթացքում հետաքրքրություն է զարգացրել տարածության և շրջակա միջավայրի նկատմամբ: Աննան ժամանակակից արվեստում ներգրավվելուց հետո իր նախագծերում սկսեց ուսումնասիրել համակեցության և աշխարհի հետ կապի նոր ուղիներ փնտրելու թեման: Աշխատելով ինստալացիաներով և արվեստի առարկաներով՝ նա ուսումնասիրում է բնության և մարդկանց, կենդանի նյութերի և սինթետիկայի, բնականի և արհեստականի միջև հարաբերությունները: PRO ARTE հիմնադրամում սովորելով՝ նա իր պրակտիկան ընդլայնել է և սկսել զբաղվել լուսանկարչությամբ և տեսագրությամբ: 2022 թվականին Ռուսաստանից հեռանալուց հետո արվեստագետը կենտրոնացել է տան թեմայով հետազոտությունների վրա:

Nadezhda Bey
To-Do list
2 min. 35 sec., 2021

Sound: Vasya Filatova

In the 'To-do list' project, Nadezhda experiments with the "VR space as an art object" format. This is a variation on installation, created entirely in digital form and therefore allows the viewer to exist in it differently than in the physical world. What people experience in a physical space is a mental construct. And the digital space in this context is a continuation of the mental space. What, can the environment of their thoughts and experience — turned into a virtual place — tell us about the experience of another? Is it possible to find a way to communicate with another in the space of one's perception of reality?

The project mixes the physical with the mental and sensory experience, creating a tangled digital architecture that the viewer can immerse themselves in with VR equipment and try to step into the artist's shoes, in her experience.

Nadezhda Bey
Nadezhda Bey is a VR artist and performer, as well as a professor in the Art & Science program at ITMO University. She teaches disciplines related to digital art and virtual worlds. Since 2021, Nadezhda has been developing the InterActive Virtual Reality Laboratory. She has participated in international exhibitions and festivals of contemporary technological art and was awarded the ASTA Prize in the VR/AR category. She was nominated for the Kuryokhin–2022 Award in two categories: "Grand Prix" and "Best Media Object."
She frequently speaks as a speaker and expert on topics related to art, creative education, and new technologies.

Նադեժդա Բեյ
Անելիքների ցանկ
2 ր., 35 վրկ., 2021

Ձայն՝ Վասյա Ֆիլատովա

«Անելիքների ցանկ» նախագծում Նադեժդան փորձարկում է «VR (վիրտուալ իրականություն) տարածքը՝ որպես արվեստի օբյեկտ» ձևաչափը: Սա ամբողջությամբ թվային միջավայրում ստեղծված ինստալացիայի տարբերակ է, որը հետևաբար թույլ է տալիս դիտողին դրա մեջ լինել այլ կերպ, քան ֆիզիկական աշխարհում: Այն, ինչ մարդիկ զգում են ֆիզիկական տարածքում, մտավոր կառուցվածք է, իսկ թվային տարածությունն այս համատեքստում մտավոր տարածության շարունակությունն է: Ի՞նչ կարող է մեզ պատմել ուրիշի փորձի մասին մտքերի և փորձի միջավայրը, որը վերածվել է վիրտուալ տարածքի: Հնարավո՞ր է արդյոք գտնել ուրիշի հետ հաղորդակցվելու միջոց իրականության ընկալման տարածության մեջ:

Նախագիծը միախառնում է ֆիզիկականը մտավոր և զգայական փորձի հետ՝ ստեղծելով խճճված թվային ճարտարապետություն, որի մեջ դիտողը VR սարքավորումներով կարող է ընկղմվել և փորձել մտնել արվեստագետի փորձառության մեջ:

Նադեժդա Բեյ
Նադեժդա Բեյը VR նկարիչ և փերֆորմեր է, ինչպես նաև ITMO համալսարանի «Արվեստ և գիտություն» ծրագրի դասախոս: Նա դասավանդում է թվային արվեստի և վիրտուալ աշխարհների վերաբերյալ առարկաներ: 2021 թվականից Նադեժդան զարգացնում է Ինտերակտիվ վիրտուալ իրականության լաբորատորիան: Նա մասնակցել է ժամանակակից տեխնոլոգիական արվեստի միջազգային ցուցահանդեսների ու փառատոնների և արժանացել ASTA մրցանակի VR/AR անվանակարգում: Նա առաջադրվել է Կուրյոխին-2022 մրցանակի երկու անվանակարգերում՝ «Գրան պրի» և «Լավագույն մեդիա օբյեկտ»: Նա հաճախ է հանդես գալիս որպես բանախոս և արվեստի փորձագետ՝ ստեղծագործական կրթության և նոր տեխնոլոգիաների հետ կապված թեմաներով:

Marisa Benito
They're all dead (Todos están muertos)
6 min. 23 sec., 2023

The project aims to focus attention on the physical photographic medium versus the immaterial digital medium. It is about how the relationship with images has transformed since losing materiality and becoming volatile, perishable, and overabundant. Photography has become a means of communication; outdated, disposable, millions are generated every day, and we are drowning in an ocean of images.

The use of animation and video post-production allows the artist to elaborate a discourse in space-time, to bring the photographs back to the present at a specific moment and duration. The aesthetic discourse revolves around the physical aspect of the support and its organic nature, which is why metaphors and visual and poetic games are articulated about the effects of the passage of time on matter and its degradation, disappearance or transformation.

Marisa Benito
Marisa Benito (Barcelona, 1974) has a Bachelor's Degree in Fine Arts and a Master's Research Degree in Art. She lives and works in Córdoba, where she teaches Audiovisual Media at the "Mateo Inurria" School of Art. She combines her professional activity with audiovisual creation and photography. The aesthetics of her work are generated through images shaped by sensory experience, the imaginary and the memory, and photographic and cinematographic language.

Մարիսա Բենիտո
Նրանք բոլորը մեռած են (Todos están muertos)
6 ր., 23 վրկ., 2023

Նախագիծը նպատակ ունի ուշադրությունը կենտրոնացնել ֆիզիկական լուսանկարչական միջավայրի վրա՝ հակադրվելով ոչ նյութական, թվային միջավայրին: Խոսքն այն մասին է, թե ինչպես է փոխվել պատկերների հետ փոխհարաբերությունն այն պահից հետո, երբ դրանք կորցրին իրենց նյութականությունը և դարձան անէացող ու չափազանց շատ: Լուսանկարչությունը դարձել է հաղորդակցման միջոց. հնացած, մեկանգամյա օգտագործման միլիոնավոր պատկերներ են ստեղծվում ամեն օր, և մենք խեղդվում ենք դրանց օվկիանոսում:

Անիմացիայի և վիդեո հետ-արտադրության օգտագործումը թույլ է տալիս արվեստագետին տարածություն-ժամանակում դիսկուրս մշակել և լուսանկարները հետ բերել ներկա՝ որոշակի պահի և տևողության մեջ: Գեղագիտական դիսկուրսը պտտվում է հենարանի ֆիզիկական կողմի և նրա օրգանական բնույթի շուրջ, այդ իսկ պատճառով փոխաբերություններն ու տեսողական ու բանաստեղծական խաղերը ձևակերպվում են նյութի վրա ժամանակի ազդեցության և դրա դեգրադացիայի, անհետացման կամ փոխակերպման շուրջ:

Մարիսա Բենիտո
Մարիսա Բենիտոն (Բարսելոնա, 1974թ.) ունի կերպարվեստի բակալավրի և արվեստի մագիստրոսի գիտական աստիճան: Նա ապրում և աշխատում է Կորդոբայում, որտեղ տեսա-լսողական մեդիա է դասավանդում Մատեո Ինուրիա արվեստի դպրոցում: Նա իր մասնագիտական գործունեությունը համատեղում է տեսա-լսողական ստեղծագործության և լուսանկարչության հետ: Նրա ստեղծագործության գեղագիտությունը ձևավորվում է զգայական փորձառության, երևակայության և հիշողության, լուսանկարչական և կինեմատոգրաֆիական լեզվի միջոցով ձևավորված պատկերների միջոցով:

Maria Kuptsova
Science Art project
3 min. 54 sec., 2023

ARBOR is a cyborganic living entity grown through bio-artificial means using technology. It is a regenerative system in which the entire organism is alive, and the concept of life encompasses both biological and technological forms. The project offers an approach to extracting the intelligence of organic wood structures and reimagining their life cycle as a bio-artificial system that is alive in a cybernetic sense.

The project proposes a method of capturing the diverse properties possessed by a living tree using machine learning algorithms to embed its logic into a digital form. This method enables the creation of hybrid materiality that contains biological intelligence within a digital structure.

Maria Kuptsova
Maria Kuptsova is an artist, architect, and researcher. In her practice, she explores synthetic forms of intelligence and aesthetics, creating cyborganic objects, systems, processes, and interfaces. Maria's Ph.D. research, conducted under the supervision of Prof. Claudia Pasquero at the University of Innsbruck, points towards the possibility of developing a bio-machinic design technique to impart biological intelligence into inorganic objects and synthetic environments, as well as reveals the potential of alternative modes of reasoning to become an active design agency.

Մարիա Կուպցովա
Գիտական արվեստային նախագիծ
3 ր., 54 վրկ., 2023

ARBOR-ը կիբօրգանական կենդանի էակ է, որն աճեցվում է բիո-արհեստական միջոցների օգնությամբ՝ օգտագործելով տեխնոլոգիան: Դա վերականգնվող համակարգ է, որտեղ ողջ օրգանիզմը կենդանի է, և «կյանք» հասկացությունը ներառում է իր մեջ ինչպես կենսաբանական, այնպես էլ տեխնոլոգիական ձևեր: Ծրագիրն առաջարկում է օրգանական փայտի կառուցվածքների հետազոտման և դրանց կյանքի ցիկլը որպես բիո-արհեստական համակարգ վերաիմաստավորելու մոտեցում, որը կենդանի է կիբերնետիկ իմաստով:

Նախագիծն առաջարկում է կենդանի ծառի տարբեր հատկությունները ներկայացնելու մեթոդ՝ օգտագործելով մեքենայական ուսուցման ալգորիթմներ՝ դրա տրամաբանությունը թվային ձևի մեջ ներդնելու համար: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ստեղծել հիբրիդային նյութականություն, որը պարունակում է կենսաբանական բանականություն՝ թվային կառուցվածքում:

Մարիա Կուպցովա
Մարիա Կուպցովան արվեստագետ, ճարտարապետ և հետազոտող է: Իր պրակտիկայում նա ուսումնասիրում է բանականության և գեղագիտության սինթետիկ ձևերը՝ ստեղծելով կիբօրգանական առարկաներ, համակարգեր, գործընթացներ և ինտերֆեյսներ: Մարիայի ասպիրանտական հետազոտությունը, որը նա իրականացրել է Ինսբրուկի համալսարանում պրոֆեսոր Կլաուդիա Պասկերոյի ղեկավարությամբ, մատնանշում է բիոմեխանիկական նախագծման տեխնիկայի մշակման հնարավորությունը՝ կենսաբանական բանականությունը անօրգանական առարկաներին և սինթետիկ միջավայրերին փոխանցելու համար, ինչպես նաև բացահայտում է այլընտրանքային մտածողության ձևերի ներուժը՝ դառնալու ակտիվ դիզայներական գործոն:

Selena Isho
I peel off my fragile skin
3 min. 24 sec., 2021

The artist's menifesto is aimed at criticizing the dominant masculine structure of the world, patriarchal authority, and social inequality. In an attempt to rebuild her own female corporeality and gain social power, the heroine only finds herself facing her own fragility and vulnerability again. The video features a voice-over of the artist's feminists letter, read by a Google voice assistant. This represents a delegation of the familiar act of speaking to someone else, as her own voice has never been heard before. Unintentional language deformation occurs, raising the question of who the language belongs to.

Selena Isho
Born in 1993 in Kazan, Selena Isho has been living in St. Petersburg since 2013. She works in the genre of installations and three-dimensional objects of machine form. Her artistic practice includes porcelain sculpture, painting, graphics, textiles, video art, performance, and feminist writing. Her works predominantly feature existential, psychoanalytic motifs, themes of gender, corporality, and class privilege. Her works are held in private collections in Russia and abroad.



Սելենա Իշո
Ես կլպում եմ իմ փխրուն մաշկը
3 ր., 24 վրկ., 2021

Արվեստագետի մանիֆեստն ուղղված է քննադատելու աշխարհի գերիշխող առնական կառուցվածքը, հայրիշխանական հեղինակությունը և սոցիալական անհավասարությունը: Փորձելով վերակառուցել իր սեփական կանացի մարմնականությունը և ձեռք բերել սոցիալական ուժ՝ հերոսուհին կրկին առերեսվում է իր փխրունության և խոցելիության հետ: Տեսանյութում ներկայացված է արվեստագետի ֆեմինիստական նամակը, որը կարդում է Google-ի ձայնային օգնականը: Սա խոսելու բոլորիս ծանոթ արարքը ուրիշին պատվիրակելու գործողություն է, քանի որ իր սեփական ձայնը նախկինում երբեք չի լսվել: Տեղի է ունենում լեզվի ակամա դեֆորմացիա՝ առաջ բերելով այն հարցը, թե ում է պատկանում լեզուն:

Սելենա Իշո
Սելենա Իշոն ծնվել է 1993 թվականին Կազանում, 2013 թ-ից ապրում է Սանկտ Պետերբուրգում, աշխատում է ինստալացիաների և մեքենայական ձևի եռաչափ առարկաների ժանրում: Նրա գեղարվեստական պրակտիկան ներառում է ճենապակյա քանդակագործություն, գեղանկարչություն, գրաֆիկա, տեքստիլ, վիդեոարտ, կատարողական արվեստ և ֆեմինիստական տեքստեր: Նրա ստեղծագործությունները հիմնականում պարունակում են էքզիստենցիալ, հոգեվերլուծական մոտիվներ, գենդերի, մարմնականության և դասակարգային արտոնությունների թեմաները: Նրա աշխատանքները պահվում են Ռուսաստանի և արտերկրի մասնավոր հավաքածուներում:

Anastasiia Lonshakova
SARMA project
Led film
21 min. 58 sec., 2017
Choreographer, Director, Editor: Anastasiia Lonshakova
Composer: Matiss Chudars

SARMA International project. Dance performance on the ice of the Baikal Lake. The Sarma project is the result of a master's study and was filmed on Lake Baikal in winter with the LabirintLab group, which is engaged in the research, development, and construction of labyrinths. The video explores the relationship between man and nature, in which the boundaries of verbal communication break down. Since ancient times, it was believed that the forms of nonverbal communication — movement

and dance — made it possible to get in touch with the nonhuman side of the world. The film is a documentary-plastic story of one week spent by the film crew on the ice of Lake Baikal in the village, where the strongest wind, the sarma, arises.

Anastasiia Lonshakova
Contemporary dance and film dance artist from Irkutsk, Russia. Creator of Baikal Contemporary Dance Art in Irkutsk, creative producer of the international festival on Baikal Radi Sveta: Baikal.

Անաստասիա Լոնշակովա
ՍԱՐՄԱ նախագիծ
Led film
21 ր., 58 վրկ., 2017
Պարուսույց, ռեժիսոր, խմբագիր՝ Անաստասիա Լոնսակովա
Կոմպոզիտոր՝ Մատիս Չուդարս

SARMA միջազգային նախագիծ. պարային փերֆորմանս Բայկալ լճի սառույցի վրա: Նախագիծը մագիստրոսական ուսումնասիրության արդյունք է, և նկարահանվել է ձմռանը Բայկալ լճում LabirintLab խմբի հետ, որը զբաղվում է լաբիրինթոսների հետազոտությամբ, մշակմամբ և կառուցմամբ: Տեսանյութը ուսումնասիրում է մարդու և բնության փոխհարաբերությունները, որոնցում խոսքային հաղորդակցության սահմանները կոտրվում են: Հին ժամանակներից ենթադրվում էր, որ ոչ բանավոր հաղորդակցության ձևերը՝ շարժումը և պարը, հնարավորություն են տալիս կապ հաստատել աշխարհի ոչ մարդկային կողմի հետ: Ֆիլմը վավերագրական-պլաստիկ պատմություն է գյուղում Բայկալ լճի սառույցի վրա նկարահանող խմբի անցկացրած մեկ շաբաթվա մասին, որտեղ փչում է ամենաուժեղ քամին՝ սարման:

Անաստասիա Լոնշակովա
Ժամանակակից պարի և կինոյի արտիստ Իրկուտսկից: Բայկալյան ժամանակակից պարարվեստի ստեղծող Իրկուտսկում, Բայկալ Ռադի Սվետա. Բայկալ միջազգային փառատոնի կրեատիվ պրոդյուսեր:

Mariam Arami (Papoyan)
Dzhnhal (snow melting process)
9 min. 46 sec., 2021

The content of the work performed as part of the Festival of Snow and Ice Sculptures is checked through a word game. This is a video performance, the components of which are snow and earth. A word symbolizing the intensity of loss and pain that befell society and the Armenian people is born on a flat, snow-covered area, like white paper and a new page.

The work "Dzhnhal", created by ephemeral particles of nature and the language of nature, conveys the allegory of the cycle of time, the warmth of memories and the pain of physical loss.

Mariam Arami (Papoyan)
Born in Armenia, in the city of Vagharshapat. As an artist, she is more of a conceptualist and does not limit herself to any means of expression or artistic language. The most expressive generality of her works is their duality, which, regardless of the idea, allows the audience to create their hypothesis, as if giving consciousness to the work, leading to a new self-discovery. Art teacher at Art school named by Eghishe Tatevosyan, paper conservation, and restoration at the History Museum of Armenia, art director of DADA hub ART gallery, graphic design, illustration, and book' modelling.

Մարիամ Արամի (Պապոյան)
Ձնհալ
9 ր., 46 վրկ., 2021

Ձյան և սառցե քանդակների փառատոնի շրջանակներում կատարված աշխատանքը տեղի է ունենում բառախաղի միջոցով: Սա վիդեո փերֆորմանս է, որի բաղադրիչներն են ձյունն ու հողը: Հասարակությանն ու հայ ժողովրդին պատուհասած կորստի ու ցավի ինտենսիվությունը խորհրդանշող բառը ծնվում է հարթ, ձյունածածկ տարածքում՝ սպիտակ թղթի և նոր էջի նման:

Բնության վաղանցիկ մասնիկներով և բնության լեզվով ստեղծված «Ձնհալ» ստեղծագործությունը փոխանցում է ժամանակի շրջապտույտի այլաբանությունը, հիշողությունների ջերմությունն ու ֆիզիկական կորստի ցավը:

Մարիամ Արամի (Պապոյան)
Ծնվել է Հայաստանում՝ Վաղարշապատ քաղաքում: Նա կոնցեպտուալ արվեստագետ է և չի սահմանափակվում արտահայտչական որևէ միջոցով կամ գեղարվեստական լեզվով: Նրա ստեղծագործությունների ամենաարտահայտիչ ընդհանրությունը երկակիությունն է, որը, անկախ գաղափարից, հանդիսատեսին թույլ է տալիս ստեղծել իր վարկածը, կարծես ստեղծագործությանը գիտակցություն տալով՝ տանելով դեպի նոր ինքնաբացահայտում:
Եղիշե Թադևոսյանի անվան արվեստի դպրոցի արվեստի ուսուցիչ է, Հայաստանի պատմության թանգարանում թղթի պահպանման և վերականգնման մասնագետ, DADA hub ART պատկերասրահի գեղարվեստական ղեկավար, մասնագիտացած է գրաֆիկական դիզայնի, նկարազարդման և գրքերի մոդելավորման մեջ:

Eléonore de Montesquiou
Eksperiment Katja
9 min. 25 sec., 2022
Music: Lucy Railton

Katja was born in 1992, an experimental generation for the new Republic of Estonia. She is floating, neither attached to Estonia, nor to Russia. Like Little Red Riding hood, she has freed herself from experiments and fears imposed on her. The film suggests several metaphors to describe the trauma of the displaced — from Little Red Riding Hood to the keyword of experiment. Location: Narva, Estonia.

Eléonore de Montesquiou
Eléonore de Montesquiou (born in 1970 in Paris, France) is a French-Estonian artist. Eléonore de Montesquiou's work revolves around articulating private and official histories, personal and national identities. It tackles the intricacies and ambiguities of living in the margins, based on her experience of uprootedness. Eléonore is primarily working with video; she tapes testimonies, creating prosthetic memories of repressed histories. In her documentary-informed works, her camera becomes the voice of these voiceless people. Her work is based on a documentary approach, translated in films, drawings and texts; it deals mainly with issues of integration/immigration/meaning of a nation in Estonia, giving voice to the Russian community. A few years ago, she started working with asylum seekers from French-speaking countries in Estonia.

Էլեոնորա դե Մոնտեսկիու
Փորձ Կատյա
9 ր., 25 վրկ., 2022
Երաժշտություն՝ Լյուսի Ռեյլթոն

Կատյան ծնվել է 1992 թվականին, Էստոնիայի Նոր Հանրապետության փորձարարական սերնդի ներկայացուցիչ է: Նա լողում է. ոչ Էստոնիային է կապված, ոչ Ռուսաստանին: Կարմիր գլխարկի նման նա ազատվել է փորձերից և իրեն պարտադրված վախերից: Ֆիլմը մի քանի փոխաբերություններ է առաջարկում տեղահանվածների տրավման նկարագրելու համար՝ Կարմիր գլխարկից մինչև «փորձ» հիմնաբառը: Գտնվելու վայրը՝ Նարվա, Էստոնիա:

Էլեոնորա դե Մոնտեսկիու
Էլեոնորա դե Մոնտեսկիուն (ծնվել է 1970 թ-ին, Փարիզ, Ֆրանսիա) ֆրանս-էստոնացի արվեստագետ է: Նրա աշխատանքը պտտվում է մասնավոր և պաշտոնական պատմությունների, անձնական և ազգային ինքնությունների ձևակերպման շուրջ: Այն անդրադառնում է լուսանցքում ապրելու բարդություններին և երկիմաստություններին՝ հիմնվելով իր արմատները կորցնելու փորձի վրա: Նա հիմնականում աշխատում է տեսանյութերի հետ. ձայնագրում է վկայություններ՝ ստեղծելով ճնշված պատմությունների պրոթեզային հիշողություններ: Իր փաստագրական ստեղծագործություններում նրա տեսախցիկը դառնում է այս ձայնազուրկ մարդկանց ձայնը: Նրա աշխատանքը հիմնված է ֆիլմերում, նկարներում և տեքստերում վավերագրական մոտեցման վրա: Այն հիմնականում առնչվում է Էստոնիայում ազգի ինտեգրման/ներգաղթի/իմաստի հետ՝ ձայն տալով ռուսական համայնքին: Մի քանի տարի առաջ նա սկսեց աշխատել Էստոնիայում ֆրանսախոս երկրներից ապաստան հայցողների հետ:

Gor Margaryan
Phantomfug
16 min. 48 sec., 2022

A film-essay delving into the memories of war and their enduring omnipresence that appears never-ending. Drawing upon personal and autobiographical considerations, the movie follows the imprints left by the experience of war. With the persistent emergence of new violent conflicts, they continue to exert a lasting influence on one's emotional realm and familial bonds.

Gor Margaryan
Gor Margaryan is a freelance artist and currently heads the media workshop at the Muthesius Academy of Fine Arts in Kiel. The focus of his artistic work lies in experimental film and media art, moving at the interface between art and new technology. Current works deal with human influences on our natural spaces, such as the destruction of the Amazon rainforest or the Siberian taiga. The aim of these projects is to show the viewer the aesthetics and beauty that are lost through this negative human influence. The focus of Margaryan's work is always on people: they form both the starting point and the fixed point of his artistic explorations. In his films, installations and publications, this becomes clear in his recourse to man as a source of inspiration as well as a guide.

Գոռ Մարգարյան
Ֆանտոմֆուգ
16 ր., 48 վրկ., 2022

Սա ֆիլմ-էսսե է, որը խորանում է պատերազմի հիշողությունների և դրանց մշտական ամենուրեքության մեջ, որն անվերջ է թվում: Հիմնվելով անձնական և ինքնակենսագրական նկատառումների վրա՝ ֆիլմը հետևում է պատերազմի փորձառության թողած հետքերին: Մշտապես նոր, դաժան հակամարտությունների ի հայտ գալով՝ դրանք շարունակում են տևական ազդեցություն ունենալ մարդու հուզական աշխարհի և ընտանեկան հարաբերությունների վրա:

Գոռ Մարգարյան
Գոռ Մարգարյանը ֆրիլանս արվեստագետ է և ներկայումս ղեկավարում է Քիլ քաղաքի Մութեզիուսի գեղարվեստի ակադեմիայի մեդիա աշխատարանը: Նրա գեղարվեստական աշխատանքը կենտրոնանում է փորձարարական կինոյի և մեդիա արվեստի վրա՝ գտնվելով արվեստի և նոր տեխնոլոգիաների միջակայքում: Նրա ընթացիկ աշխատանքները վերաբերում են բնության վրա մարդու ազդեցությանը, ինչպիսիք են Ամազոնի անձրևային անտառների կամ Սիբիրյան տայգայի ոչնչացումը: Այս նախագծերի նպատակն է դիտողին ցույց տալ գեղագիտությունն ու գեղեցկությունը, որոնք վերանում են մարդկային այս բացասական ազդեցության պատճառով: Մարգարյանի ստեղծագործության ուշադրության կենտրոնում միշտ մարդիկ են. նրանք կազմում են նրա գեղարվեստական ուսումնասիրությունների և՛ սկզբնակետը, և՛ հենակետը: Դա պարզ է դառնում նրա ֆիլմերում, ինստալացիաներում և հրապարակումներում, երբ նա դիմում է մարդուն՝ որպես ոգեշնչման աղբյուր, ինչպես նաև ուղեցույց:

SPECIAL SCREENING

ՀԱՏՈՒԿ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Pim Zwier
O, Collecting Eggs Despite the Times
80 min., 2022

From the translucent golden eggs of the Tibetan bearded vulture to those of the British guillemot with their Jackson Pollock-like splashes, German ornithologist Max Schönwetter (1874–1961) collected them all. He devoted his life to oology, the study of birds' eggs. But while Schönwetter created order in his world of eggs, chaos broke out in the world around him on the eve of the Second World War.

Archive footage of turbulent outside events contrasts with re-enacted scenes from Schönwetter's study. As Nazis march through the streets, he measures eastern subalpine warbler's eggs. His correspondence with fellow scientists and collectors (heard in voiceover) evokes both the zeitgeist and the single-minded collecting urges of Schönwetter and his associates. A soldier on the Finnish-Russian front, for example, is delighted with the ptarmigan eggs he has found between battles.

Pim Zwier
Independent media-artist / film maker. He obtained his MFA at the Piet Zwart Institute in Rotterdam in 2003. The artist makes documentaries, short films and video-installations. his films balance between documentary, experimental film and media-art. Zwier's films and video installations were shown at different international festivals, exhibitions, and on television.

Պիմ Ցվիեր
O, ձու հավաքելը՝ չնայած ժամանակներին
80 ր., 2022

Գերմանացի թռչնաբան Մաքս Շյոնվեթերը (1874–1961) հավաքել է տիբեթյան մորուքավոր անգղի կիսաթափանցիկ ոսկե ձվերից մինչև Ջեքսոն Փոլոքի նմանվող շրթունքներով բրիտանական գիլեմոտի ձվերը: Նա իր կյանքը նվիրել է թռչնաբանությանը՝ թռչունների ձվերի ուսումնասիրությանը: Բայց մինչ նա կարգուկանոն էր ստեղծում ձվերի իր աշխարհում, նրան շրջապատող աշխարհում Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին քաոս էր բռնկվում:

Արտաքին բուռն իրադարձությունների արխիվային կադրերը հակադրվում են նրա ուսումնասիրությունների վերարտադրված տեսարաններին. երբ նացիստները երթով անցնում են փողոցներով, նա չափում է արևելյան ենթալպյան թռչնի ձվերը: Նրա նամակագրությունը գործընկեր գիտնականների և հավաքորդների հետ (լսվում է ձայնի միջոցով) ներկայացնում է թե՛ ժամանակի շունչը, թե՛ Շյոնվեթերի և իր համախոհների հավաքագրման նպատակասլաց մղումները: Ռուս–ֆիննական ճակատում գտնվող զինվորն, օրինակ, հիացած է մարտերի արանքում իր գտած ձյունակաքավի ձվերով:

Պիմ Ցվիեր
Պիմ Ցվիերն անկախ մեդիա-արտիստ, ռեժիսոր է: 2003 թվականին նա ստացել է մագիստրոսի կոչում Ռոտերդամի Պիտ Ցվարտի ինստիտուտում: Արվեստագետը նկարահանում է վավերագրական, կարճամետրաժ ֆիլմեր և վիդեո-ինստալացիաներ: Նրա ֆիլմերը համախմբում են վավերագրական, փորձարարական կինոն և մեդիա-արվեստը: Ցվիերի ֆիլմերն ու վիդեո-ինստալացիաները ցուցադրվել են տարբեր միջազգային փառատոներում, ցուցահանդեսներում, ինչպես նաև հեռուստատեսությամբ:

General Sponsor

ONEMARKETDATA

CYLAND Foundation Inc.

media art lab

ՀայԱրտ

Մշակութային կենտրոն | HayArt cultural centre

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

INSTITUTE FOR CONTEMPORARY ART YEREVAN

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

LEONARDO

CYFEST.ART